

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

29 նոյեմբերի 2018թ.

N 163

ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
61-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության 2018թ. նոյեմբերի 28-ի դիմումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 13-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով և նպատակ ունենալով հստակեցնել Ընտրական օրենսգրքի՝ նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի վերաբերյալ տարաբնույթ ընկալումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության 2018թ. նոյեմբերի 28-ի դիմումով նշվում է՝

«ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնաստսնձվող դրոշմանիշները, կնիքը պահվում են քվեարկության սենյակում գտնվող չիրկիզվող պահարանում»: Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ բոլոր քվեաթերթիկները պետք է տեղադրվեն և պահվեն այն նույն չիրկիզվող պահարանում, որտեղ պահվում են նաև մի շարք այլ առարկաներ՝ քվեարկության ծրարները, ինքնաստսնձվող դրոշմանիշները և կնիքները: Նման իրավական կարգավորումը համադրելով 2018 թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում գրանցված կուսակցությունների և դաշինքների քանակի (11) հետ՝ առաջացել է անհրաժեշտություն պարզաբանելու վերոնշյալ իրավական կարգավորման գործնականում կիրառության հնարավորությունները այն դեպքում, երբ քվեաթերթիկները առաջադրված կուսակցությունների շատ լինելու պատճառով իրենցից մեծ ծավալ են ներկայացնում: Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 16-րդ

հողվածի 3-րդ մասի «Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2000 ընտրող»: Հանաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի. «Ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները հատկացվում են քվեարկության նախորդ օրը՝ ընտրական տեղակասում ընտրողների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս քան ընտրողների թվից 10-ով ավելին»:

Վերոգրյալի իրավանորմերից էլ բխում է, որ յուրաքանչյուր ընտրական տեղամաս կարող է ունենալ առավելագույնը 2000 ընտրող, և յուրաքանչյուր ընտրական տեղամասի պետք է տրամադրվի տվյալ ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 5 տոկոս ավելի քանակով, բայց որ պակաս, քան ընտրողների 10-ով ավելին՝ հաշվի առնելով նաև առաջադրված կուսակցությունների քանակը:

Ստացվում է, որ եթե, օրինակ, մենք մեկ ընտրական տեղամասում առկա է 2000 ընտրող, ապա տվյալ ընտրական տեղամասին պետք է տրամադրվի ոչ ավելի, քան 2100 հատ, և ոչ պակաս, քան 2010 հատ քվեաթերթիկ՝ յուրաքանչյուր կուսակցության կամ դաշինքի համար ս.թ. դեկտեմբերի 9-ին նշանակված Ազգային ժողովի արտահերթ ընտրայություններին առաջադրվել են 11 կուսակցություն, ինչը նշանակում է, որ 2000 ընտրող ունեցող ընտրական տեղամասին պետք է տրամադրվի ոչ պակաս, քան 22.100 հատ քվեաթերթիկ ($2010 * 11 = 22.110$), և որ ավելի քան, 23.100 հատ քվեաթերթիկ ($2100 * 11 = 23.100$): Եվ ներկայիս գործող ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով բոլոր այդ քվեաթերթիկները՝ առնվազն 22.110 հատ պետք է տեղադրվեն և պահվեն չիրկիզվող պահարանում, որը գործնականում անհնար կլինի, քանի որ քանակությամբ քվեաթերթիկներ չեն տեղավորվի չիրկիզվող պահարաններում:

22 հազար քվեաթերթիկը (հաշվի առնելով քվեաթերթիկների՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած չափերը և թղթի հաստությունը) կգբաղեցնի նվազագույնը 53 լիտր ծավալ ($1,1դմ \times 2,2դմ \times 0,001դմ \times 22.000 = 53,24դմ$): Այնինչ, չիրկիզվող պահարանը ուր համաձայն Ընտրական օրենսգրքի՝ պետք է տեղադրվեն նաև բազմաթիվ այլ նյութեր ու առարկաներ, երբեմն ունենում է ընդամենը 20-30 լիտր ծավալ:

Եվ նման պայմաններում առաջանում է անհրաժեշտություն՝ պարզաբանելու համար, թե տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրված այդ քանակությամբ քվեաթերթիկները գործնականում ինչպե՞ս և որտե՞ղ պետք է պահվեն, եթե ֆիզիկապես հնարավոր չէ դրանք տեղավորել և պահել տեղամասային կենտրոններում գտնվող չիրկիզվող պահարաններում:

Դեկտեմբերի 9-ին կայանալիք նշված ընտրությունների հետ կապված ստեղծվել է այնպիսի իրադրություն, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված օրենսդրական պահանջը որոշ ընտրական տեղամասերում գործնական անհնար է լինելու կատարել՝ իրագործել, օբյեկտիվ պատճառներից ելնելով:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի. «Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է՝ դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում»:

Տվյալ դեպքում գտնում ենք, որ առկա է նորմատիվ իրավական ակտի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի, կիրառման բնագավառում ծագող վերոնշյալում մեր կողմից առաջ քաշված հարցերի պարզման անհրաժեշտություն:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի «Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը կարող է իրականացվել պարզաբանող մարմնի նախաձեռնությամբ, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով՝ սույնով խնդրում են պաշտոնապես պարզաբանել ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման բնագավառում առաջանալիք հետևյալ հարցերը՝

որտե՞ղ և ինչպե՞ս պետք է ընտրական տեղամասում պահվեն քվեաթերթիկները այն դեպքերում, երբ նրանց ծավալի մեծության պատճառով հնարավոր չէ դրանք տեղավորել և պահել տեղամասային կենտրոններում գտնվող չհրկիզվող պահարաններում:

Նշված հարցի կապակցությամբ դիմումատուն առաջարկում է պարզաբանել, որ տեղամասային կենտրոնում (տեղամասային ընտրական հանձնաժողովի տիրապետության ներքո) առկա չհրկիզվող պահարանում քվեաթերթիկների տեղավորման անհնարինության դեպքում քվեարկության նախորդ օրը դրանք տեղադրվում են պարկերի (կամ ծրարների) մեջ, իսկ այդ պարկերը (կամ ծրարները) ստորագրվում են հանձնաժողովի նախագահի ու քարտուղարի կողմից (դրանց վրա կարող են ստորագրել նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք) և հանձնվում տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ինչպես նշված է դիմումում ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պրակտիկ կիրառության ընթացքում միանշանակ առաջանալու են խնդիրներ՝ կապված տեղամասային կենտրոններում առկա չհրկիզվող պահարանների չափերի հետ: Միաժամանակ ակնհայտ է, որ Ընտրական օրենսգրքի համաձայն սահմանված է այնպիսի քվեակարգ, որի համաձայն չքվեարկված (ինքնասուսնծվող դրոշմանիշ չպարունակող) քվեաթերթիկները չեն հանդիսանում հատուկ հաշվառման փաստաթղթեր, տեղամասային ընտրական

հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների ընդհանուր թիվը չի ներառվում քվեարկության արդյունքների արձանագրություններում, դրանք չեն ստորագրվում: Նույնական կարգավիճակ ունեն նաև քվեարկության ծրարները՝ ի տարբերություն ինքնսուսնծվող դրոշմանիշերի, կնիքի և այլն:

Ընտրական օրենսգրքով սահմանված քվեակարգի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվելու է քվեաթերթիկների այնպիսի քանակ, որ ֆիզիկապես անհնար է տեղավորել չհրկիզվող պահարաններում:

Վերոգրյալով պայմանավորված և ընդունելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության 2018թ. նոյեմբերի 28-ի դիմումով ներկայացված փաստարկները, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է.

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեարկության նախորդ օրը հատկացված քվեաթերթիկները, քվեարկության ծրարները չհրկիզվող պահարանում չտեղավորվելու դեպքում դրանք կարող են պահվել քվեարկության սենյակում, որը հանձնվում է պահպանության:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մ ու կ ու չ յ ա ն